ADAAustralia
Your aged and disability advocates

Ձեր տարեցների խնամքի աջակցության ծառայությունը

Անվճար և գաղտնի Ձեր տեսանկյունը, ձեր կարծիքը

(Armenian/Հայերէն)

- Դուք տարեց եք և օգնության կարիք ունե՞ք տանը:
- Գիտե՞ք տարեցների խնամքի ծառայությունների մասին, որոնք հասանելի են տարեցներին օգնելու համար:
- Օգնության կարիք ունե՞ք տարեցների խնամքի ծառայություններից օգտվելու համար:
- Խնդիրներ ունե՞ք տարեցների խնամքի ծառայությունների հետ կապված, որոնցից ներկայումս օգտվում եք:

Ավստրալիայում տարեց մարդիկ իրավունք ունեն օգտվելու տարեցների խնամքի ծառայություններից և աջակցությունից: Ձեզ աջակցելու մի շարք տարբերակներ կան: Դուք կարող եք օգտվել՝

- տարեցների խնամքի ծառայություններից, որոնք աջակցում են ձեզ տանը՝ օգնելու ձեզ ինքնուրույն ապրել
- կարճատև խնամքից, որն օգնում է ձեզ ոտքի կանգնել վնասվածքից կամ հիվանդությունից հետո
- տարեցների խնամքի տանը բնակվելու հնարավորությունից, երբ այլևս չեք կարող ապրել տանը:

Ինչպե՞ս կարող ենք մենք օգնել

ADA Australia-ն տրամադրում է իրավապաշտպաններ ովքեր օգնում են ձեզ.

- տեղեկանալ, թե ինչ ծառայություններ են հասանելի
- օգտվել խնամքի և աջակցության ծառայություններից
- ստանալ առավելագույնը ձեր տարեցների խնամքի ծառայություններից
- հասկանալ տարեցների խնամքի ծախսերը ու վճարները
- լուծել ձեր տարեցների խնամքի ծառայությունների խնդիրները կամ գանգատները
- հասկանալ ձեր իրավունքները և համոզվել, որ ձեզ հետ հարգալից և արդարացի են վարվում
- ձեր կարծիքը հայտնել ձեր խնամքի և այն ամենի մասին, որոնք ազդեցություն ունեն ձեր վրա:

Ի՞նչ է իրավապաշտպանությունը

Իրավապաշտպանությունը աջակցություն է տրամադրում՝ օգնելու ձեզ արտահայտել ձեր ցանկությունները և բարձրաձայնել ձեր իրավունքները և կարիքները: ADA Australia-ի իրավապաշտպանը անաչառ անձնավորություն է, ով կարող է լսել ձեր իրավիճակը և օգնել ձեզ լուծել խնդիրները:

Իրավապաշտպանը ձեզ է պաշտպանում և կառաջնորդվի ձեր ցանկություններով: Կարևորն այն է, որ նրանք կպաշտպանեն ձեր գաղտնիությունը և չեն խոսի որևէ մեկի հետ, եթե դուք չցանկանաք:

Մեր ծառայությունները

- Անվճար են, Գաղտնի են, Անկախ են
- Ղեկավարվում են ձեր կողմից

Զրուցեք մեզ հետ՝ 1800 700 600

Interpreter Եթե ձեզ անհրաժեշտ է թարգմանիչ, զանգահարեք 131 450

էլ. փոստ՝ info@adaaustralia.com.au
կայք՝ www.adaaustralia.com.au

ADA Australia-ն ճանաչում է այս երկրի Ավանդական Պահապաններին և հարգում է Ավագներին՝ անցյալի, ներկայի և նորահայտ: